ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 162/ԿԳ-2 «26» 08 2026 թ.

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով.

հրամայում եմ՝

1. Հաստատել 2026/2027 ուսումնական տարում ԵՊՀ սպորտային կատարելագործման խմբերի ներքոհիշյալ ցանկը.
   1) Հրաձգություն (տղաներ, աղջիկներ),
   2) Արևելյան մարտարվեստ (տղաներ, աղջիկներ),
   3) Աթլետիկական կրոսավազք (տղաներ, աղջիկներ),
   4) Բասկետբոլ (տղաներ, աղջիկներ),
   5) Բռնցքամարտ (տղաներ, աղջիկներ),
   6) Վոլեյբոլ (տղաներ, աղջիկներ),
   7) Ծանրամարտ (տղաներ, աղջիկներ),
   8) Փետրագնդակ (տղաներ, աղջիկներ),
   9) Սեղանի թենիս (տղաներ, աղջիկներ),
   10) Ըմբշամարտ (տղաներ, աղջիկներ),
   11) Ֆուտբոլ (տղաներ, աղջիկներ),
   12) Ալպինիզմ (տղաներ, աղջիկներ),
   13) Շախմատ (տղաներ, աղջիկներ),
   14) Քիք-բոքս (տղաներ, աղջիկներ),
   15) Պարապմունք մարզասրահում (տղաներ, աղջիկներ),
   16) Հեծանվավազք (տղաներ, աղջիկներ),
   17) Ընդհանուր ֆիզպատրաստականության խումբ (տղաներ, աղջիկներ):

2. Սահմանել, որ.
   1) սպորտային կատարելագործման խմբերում կարող են ընդգրկվել միայն բակալավրիատի առաջին կուրսի ուսանողները,

2) խումբը ձևավորվում է 15-18 ուսանողի գրանցման դեպքում, բացառությամբ ընդհանուր ֆիզպատրաստականության խմբի,
3) սպորտային կատարելագործման խմբում գրանցված ուսանողը կարող է խումբը փոխել միայն հաջորդող ուսումնական տարում՝ դասընթացի սկզբին նախորդող 2 շաբաթվա ընթացքում,
4) սպորտային կատարելագործման խմբում գրանցված ուսանողի «Ստուգված» նիշը SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրվում է ինքնաշխատ եղանակով՝ առնվազն 24 ժամ (12 հաճախում) մասնակցության դեպքում,
5) պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված ուսանողների համար դասընթացի անհրաժեշտ պարտադիր հաճախումների թիվը կարող է հաշվարկել հրամանագրման օրվանից: Մինչև հրամանագրումը բաց թողնված դասաժամերը համարվում են լրացված:
6) «Չստուգված» ստացած ուսանողը կարող է լրացնել բաց թողնված ժամաքանակը վճարովի հիմունքներով հաջորդող ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից սկսած՝ նախապես ներկայացնելով դիմում: Յուրաքանչյուր լրացվող դասաժամի համար վճարվում է 3000 ՀՀ դրամ:
7) ԵՊՀ մարզասրահի վճարովի /աբոնեմենտ/ ծառայություններից օգտվող ուսանողները ստանում են «Ստուգված» առնվազն 24 ժամ /12 հաճախում/ և ավելի մասնակցության դեպքում:
8) Այլ մարզասրահի ծառայություններից օգտվող ուսանողները առնվազն 24 ժամ հաճախում ունենալու դեպքում կարող են մասնակցել ստուգարքին՝ ներկայացնելով համապատասխան հիմք /պայմանագրի պատճենը/:

3. Հանձնարարել ԵՊՀ ֆիզիկական դաստիարակության և սպորտի կենտրոնի տնօրենին՝ 2026/2027 ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածությունը հաշվարկելիս ղեկավարվել սույն հրամանով:
4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել ԵՊՀ ռեկտորի աշխատակազմի ղեկավարին:
5. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությանը, ռեկտորի աշխատակազմի ղեկավարին, Ֆիզիկական դաստիարակության և սպորտի կենտրոնին և առաջին կուրսի ուսանողներին:

ՌԵԿՏՈՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ